

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Լ. Յ. ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

Հայ քերականագետները բազմիցս են անդրադարձել գոյականական բառակապակցությունների դասակարգմանը և դրանց սկզբունքներին: Առաջարկվել են տարբեր սահմանումներ, սակայն առ այսօր չկա բոլորի կողմից ընդունված, գոյականական բառակապակցությունը բնութագրող միասնական սահմանում: Փաստական նյութն ուսումնասիրելով՝ հանգել ենք այն համոզման, որ գոյականական բառակապակցությունների ամենաամփոփիչ սահմանումը տվել է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը. «Գոյականական բառակապակցությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բառերի այնպիսի կապակցություն, որի գլխավոր անդամը՝ գոյականը, լրացված է մեկ կամ մի քանի լիլմաստ բառերով: Գոյականական բառակապակցությունը տարբերվում է վերլուծական գոյականական բառածկից նրանով, որ վերջինս, բացի գոյականից, այլ լիլմաստ բառ չի պարունակում»¹:

Մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյականական բառակապակցությունը՝ որպես բառակապակցության առանձին տեսակ, ընդունվում է միանշանակ, սակայն գոյականական բառակապակցության անվանման և դասակարգման հարցերը առաջացնում են մի շարք տարակարծություններ: Գոյականական բառակապակցության անվանման ժամանակ որոշ լեզվաբաններ ինչպես առհասարակ բառակապակցությունների, այնպես էլ գոյականական բառակապակցության տեսակն անվանող բառը սեռական-տրական հարվով են գործածում՝ գոյականի բառակապակցություն, ածականի բառակապակցություն, թվականի բառակապակցություն և այլն²: Կան քերականագետներ էլ, որ այդ բառն ածականած են գործածում՝ գոյականական բառակապակցություն, ածականական բառակապակցություն, թվականական բառակապակցություն և այլն³:

Կարծում ենք, որ նախընտրելի է երկրորդ տարբերակը, որովհետև սեռական-տրականով անվանման դեպքում բառակապակցությունը՝ որպես շարահյուսական միավոր, ընդգծված ձևով վերագրվում է ձևաբանական միավոր հանդիսացող խոսքի մասին:

Անդրադառնալով գոյականական բառակապակցությունների դասակարգմանը՝ պետք է նշենք, որ այդ հարցի վերաբերյալ միասնական կարծիք գոյություն չունի: Որպես հիմնական սկզբունք հաշվի է առնվում լրացման խոսքիմասային արտահայտությունը: Բայց դա տարբեր ուսումնասիրողների կողմից միատեսակ լուծում չի ստացել:

¹ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 291:

² Տե՛ս Լ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1975, էջ 487 (հեղինակը միայն բայով գերադաս անդամ ունեցող կապակցությունն է ածականած և անվանում՝ բայական):

³ Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, շարահյուսություն, հ. 3, Եր., 1976, էջ 852, Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, շարահյուսություն, Եր., 2003, էջ 42-43, Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Եր., 2007, էջ 329:

Գոյականական բառակապակցությունները, դրանց դասակարգման հարցերը բազմակողմանիորեն ուսումնասիրել է մեծանուն լեզվաբան Գ. Զահուկյանը: Նա գոյականով լրացում ունեցող գոյականական բառակապակցությունները առանձնացնում է գոյականական այն բառակապակցություններից, որոնց միայն գլխավոր անդամն է արտահայտված գոյականով: Առաջինները կոչում է երկեզր (բազմեզր), իսկ երկրորդները՝ մենեզր գոյականական բառակապակցություններ: Նա գրում է. «Հնարավոր է բառակապակցությունների երկու տեսակ՝ մենեզր և երկեզր: Մենեզր գոյականական բառակապակցությունները պարունակում են գոյականական մեկ եզր որպես գլխավոր անդամ՝ լինի այն եզակի թե հոգնակի՝ Այս տունը, Այս երկու գեղեցիկ տները: Երկեզր գոյականական բառակապակցությունները պարունակում են գոյականական երկու եզրեր (լինեն դրանք եզակի թե հոգնակի)՝ կապված լրացական (ստորադասական) հարաբերությամբ՝ Գրիգորի գիրքը, Տիգրան թագավորը, սխտորով ճաշը»⁴:

Չանտեսելով այն հանգամանքը, որ գոյականական բառակապակցության կազմում կարող են գործածվել «երկուսից ավելի գոյականական եզրեր»՝ Գ. Զահուկյանը առանձնացնում է նաև բազմեզր գոյականական բառակապակցություններ, որոնք բաժանում է երկու ենթախմբի: Հեղինակը գրում է. «Բազմեզր գոյականական բառակապակցությունները կարող են լինել միատիպ, եթե եզրերը կապված են միևնույն հարաբերությամբ («Հակոբի բնակարանի սենյակների դռները») և տարատիպ, եթե եզրերը կապված են տարբեր հարաբերություններով («Հակոբի ուսուցիչ ընկերը», «Հակոբի ոսկե կազմով գիրքը»)»⁵:

Գոյականական բառակապակցությունների այսպիսի դասակարգմամբ լեզվաբանը կարևորում է գոյականական բառակապակցության լրացման դերում գոյականը և այլ խոսքի մասերը տարբեր կողմերով ներկայացնելու անհրաժեշտությունը:

Այժմ անդրադառնանք մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ Վ. Քոսյանի տեսակետին: «Գոյականական բառակապակցությունները,- գրում է նա,- ըստ լրացման ձևի լինում են յոթ տեսակ: Դրանք են՝ ա) գոյականի լրացումը ուղղական հոլովով, բ) գոյականի լրացումը սեռական հոլովով, գ) գոյականի լրացումը մյուս թեք հոլովներով, դ) գոյականի լրացումը ածականով, ե) գոյականի լրացումը թվականով, զ) գոյականի լրացումը դերբայներով, է) գոյականի լրացումը մակբայով»⁶: Ակնհայտ է, որ խմբավորումը կատարելիս հեղինակը հիմք է ընդունել լրացում հանդիսացող բառի արտահայտությունը, բայց գտնում ենք՝ « ըստ լրացման ձևի » արտահայտությունն այստեղ ընդհանրական է, որովհետև մի դեպքում ակնարկում է լրացման հոլովի մասին՝ գոյականի լրացումը ուղղական հոլովով, գոյականի լրացումը սեռական հոլովով, գոյականի լրացումը մյուս թեք հոլովներով, իսկ մյուս դեպքում՝ այն մասին, թե լրացումն ինչ խոսքի մասով է արտահայտվում՝ գոյականի լրացումը ածականով, գոյականի լրացումը թվականով, գոյականի լրացումը դերբայով և այլն: Ստացվում է, որ հոլովաձևը և խոսքի մասը կարծես համարժեք հասկացություններ են:

Հարց է ծագում, թե ինչու հեղինակը գոյականական բառակապակցությունները խմբավորելիս չի առանձնացնում դերանուններով լրացում ունեցող գոյականական բառակապակցությունները՝ այսպիսի օր, ինչքան ծաղիկ, ողջ գյուղը: Պետք է նշել, որ մնան դասակարգում կատարել են նաև այլ քերականագետներ: Այսպիսի

⁴ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 554:

⁵ Նույն տեղում, էջ 555:

⁶ Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 37:

դիրքորոշման դեպքում գուցե նկատի է առնվում դերանվան հարաբերակցությունը գոյականին, ածականին, թվականին, մակբային: Բայց նման մոտեցման դեպքում, անկախ խնդրի լուծման ճշտությունից, տրամաբանական կլինեք, որ չընդունվեք դերանվանական բառակապակցությունների գոյությունը: Իրողությունն այն է, որ բառակապակցությունը համապատասխան յուրահատկություններով է օժտված լինում ոչ միայն այն դեպքում, երբ դերանունը դրանում գերադաս անդամի դերով է հանդես գալիս, այլև, երբ լրացման դերով է հանդես գալիս: Հետևաբար, այս պարագայում առանձին տեսակ պետք է ճանաչվեն նաև դերանուն լրացում ունեցող գոյականական բառակապակցությունները: Որքան էլ, ասենք, *այսպիսի* դերանունը ածականին հարաբերակից համարվի, այնուամենայնիվ *այսպիսի ծաղիկ* և *բուրավետ ծաղիկ* կապակցությունները իրարից տարբերվում են ոչ միայն իրենց բաղադրիչների խոսքիմասային արտահայտությամբ, այլև հարաբերություն արտահայտելու եղանակով, արտահայտչականությամբ: *Այսպիսի ծաղիկ* կապակցությամբ առարկայի և դրա հատկանիշի հարաբերությունն է մատնանշվում, որը չի կարող բնորոշ լինել որևէ ածականով լրացում ունեցող գոյականական բառակապակցությանը: Սակայն կան քերականագետներ, որոնք առանձնացնում են դերանունով լրացում ունեցող գոյականական բառակապակցություններ: Կարծում ենք, որ նման դիրքորոշումը ճիշտ է: Գոյականական բառակապակցությունները խմբավորելիս Խ. Բաղիկյանը, օրինակ, առանձնացնում է գոյականի բոլոր հոլովներով արտահայտված լրացումներով գոյականական բառակապակցություններ, ածականով, թվականով, անկախ դերբայներով, դերանուններով և մակբայներով գոյականական բառակապակցություններ⁷:

Հետագայում բառակապակցություններին անդրադարձած քերականագետները որոշ հարցերում ցուցաբերել են նոր մոտեցում: Մասնավորապես առանձին ուշադրության է արժանացել գոյական + գոյական կադապարով բառակապակցությունների խմբավորման հարցը: Ն. Պառնասյանը, Ս. Գյուլբուդաղյանը այդպիսի բառակապակցությունները բաժանում են երկու խմբի: Պառնասյանը բառակապակցությունների ենթախմբավորման հարցում նկատի է առնում այն, թե բառակապակցության գերադաս անդամը հարաբերակցում⁸ է այլ խոսքի մասերի, հատկապես բային, երբեմն նաև ածականին, թե՞ ոչ⁹: Առաջին խմբում ներկայացվում են այսպիսի օրինակներ՝ սեղանի գինի, քար սիրտ, կոլտնտեսության այգի և այլն: Երկրորդ խմբում ներկայացվում են հետևյալ օրինակները՝ կառուցում Սևանի ափին (կառուցել Սևանի ափին), ուսուցում հայերեն լեզվով (ուսուցանել հայերեն լեզվով), վախ ցրտից (վախենալ ցրտից), վերադարձ կեսգիշերին (վերադառնալ կեսգիշերին) և այլն: Եթե ուշադիր քննենք օրինակները, պապ կտեսնենք, որ երկրորդ խմբում եղած բառակապակցությունների գերադաս անդամը բայանուն է, իսկ առաջին խմբի բառակապակցություններում գերադաս անդամը սովորական գոյական է, որը ցույց է տալիս առարկայացված հասկացություն:

Ս. Գյուլբուդաղյանը երկրորդ խմբի գոյականական բառակապակցությունները ներկայացնում է առանձին խմբով՝ «Բայանուն գոյականներով բառակապակցություններ» ենթավերնագրի տակ՝ դրանց համար որպես առանձնահատկություն նշելով նաև այնպիսի լրացում ունենալը, որը հատուկ է բային. «Բայանուն գոյականը ի տարբերություն անձ, իր ցույց տվող գոյականների, արտահայտում է գործողության առարկայացված հասկացություն և, որքանով էլ նա գոյական է, իր մեջ

⁷ Տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 43:

⁸ Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 24:

պահպանում է գործողության իմաստ»⁹: Այլ կերպ ասած՝ մվեր ուսուցչիս, առաջադրանք աշակերտներին, մեկնումը արտասահման, հանդիպում տանը և նման կապակցություններում լրացումներն անվերապահորեն համարվում են խնդիր կամ պարագա: Կարծում ենք, որ այսպիսի խմբավորման ժամանակ այնքան ակնհայտ է բայանունների տարբերությունը մյուս գոյականներից, որ դրանց յուրահատկությունը չի կարող հաշվի չառնվել նաև բառակապակցություններում գերադաս անդամի դերում հանդես գալու պարագան: Սակայն համապատասխան գոյականական բառակապակցությունների խմբավորման ժամանակ միայն գերադաս անդամի բային հարաբերակից լինելը նկատի ունենալը հնարավորություն չի տալիս այդ բառակապակցություններն այնպիսի խմբերի բաժանել, որոնք իրարից տարբեր լինեն և՛ գերադաս անդամի արտահայտությամբ (բայանուն – ոչ բայանուն), և՛ լրացումների իմաստային յուրահատկությամբ, որովհետև ինչպես բայական, ամակական և մյուս բառակապակցությունների, այնպես էլ գոյականական բառակապակցությունների ենթախմբավորման ժամանակ որպես կարևոր, կողմնորոշիչ իրողություն է առնվում դրանց լրացումը: Քննարկման առարկա գոյականական բառակապակցությունների խմբավորման ժամանակ այլ սկզբունքով առաջնորդվելու դեպքում է, որ ասվում է, թե դրանք այնպիսի լրացում են ունենում, որը հատուկ է բային, այսինքն՝ ունենում են խնդիր կամ պարագա կամ խնդրային - պարագայական նշանակությամբ լրացում: Սակայն մեր լեզվում շատ են նաև այնպիսի գոյականական բառակապակցությունները, որոնց գերադաս բաղադրիչը թեև բայանուն չէ, բայց ունենում է խնդրային, պարագայական նշանակությամբ լրացումներ, ինչպես՝ ուղերձ հայ ժողովրդին, մվեր Հայաստանի մտավորականներին, թուրք ուսանող ընկերոջս և այլն: Իրավամբ հարց է ծագում, թե որ խմբում պետք է ներկայացնենք այսպիսի բառակապակցությունները: Բային կամ ամականին հարաբերակից կամ բայանուն գերադաս անդամ ունեցողների շարքին չենք կարող դասել, քանի որ գերադաս անդամն այդպիսին չէ, ոչ էլ կարող ենք դասել բային ոչ հարաբերակից գերադաս անդամով բառակապակցությունների շարքին, որովհետև գերադաս անդամի կապը ստորադաս անդամի հետ իրացվում է ոչ թե առդրությամբ, ինչը բնորոշ է համարվում սեղանի գիրք, քար սիրտ և նմանօրինակ այլ կապակցություններին, այլ իրացվում է խնդրառությամբ:

Այնպես է ստացվում, որ եթե գոյական + գոյական կադապարով բառակապակցությունների խմբավորման հարցում առաջնորդվում ենք գերադաս անդամի՝ բային (մասամբ ամականին) հարաբերակից լինելու հանգամանքով, ապա առաջանում են նաև այնպիսի գոյականական բառակապակցություններ, որոնց լրացական անդամը օժտված է խնդրային կամ պարագայական իմաստով, իսկ եթե առաջնորդվում ենք լրացումներով, ապա առաջանում են այնպիսի գոյականական բառակապակցություններ, որոնց գերադաս անդամը բային հարաբերակից չէ, բայանուն չէ:

Գոյականական բառակապակցությունները ինքնատիպ ձևով է խմբավորել Մ. Ասատրյանը: Նա ամբողջ գոյականական բառակապակցությունները բաժանում է երկու հիմնական խմբի՝ « 1. գոյական (նաև գոյական դերանուն կամ գոյականաբար գործածված բառ) + գոյական և 2. հատկանշային իմաստ արտահայտող որևէ բառ (ամական, թվական, հատկանշային իմաստ արտահայտող դերանուն, հարակատար, ենթակայական և ապառնի II դերբայներ) + գոյական կապակցություններ»¹⁰:

⁹ Մ. Գյուլբողազյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988, էջ 37:

¹⁰ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987, էջ 82:

Եթե ուշադրությամբ ուսումնասիրենք հեղինակի կատարած խմբավորումը, ապա կտեսնենք, որ դրա հիմքում ընկած է այն սկզբունքը, թե լրացումն ինչ խոսքի մասով է արտահայտված՝ գոյականով, թե այլ խոսքի մասերով: Կարծում ենք, որ այսպիսի մոտեցումը միանգամայն ընդունելի է:

Գոյական + գոյական կապակցությունների ենթախմբավորման հարցում Մ. Ասատրյանի ելակետն այն է եղել, թե գոյական բառակապակցության լրացում բաղադրիչը շարահյուսական ինչ դերով է հանդես գալիս: Ըստ այդմ, նա ընդունում է գոյական + գոյական կապակցությունների երկու ենթատեսակ: Այս կապակցությունների մեջ, գրում է հեղինակը, պետք է տարբերել երկու ենթախումբ՝ ա) գոյականից կախված հոլովական ձևը, որպես վերադիր, այսինքն՝ որպես որոշիչ և հատկացուցիչ, և բ) գոյականից կախված ձևը որպես խնդիր ու պարագա¹¹: Այսպիսով, մի խմբում դասվում է այն բառակապակցությունները, որոնցում լրացումը հանդես է գալիս որպես վերադիր՝ որոշիչի ու հատկացուցիչի պաշտոնով, իսկ մյուս խմբում նրանք, որոնց լրացումը, ըստ հեղինակի, խնդիր է կամ պարագա: Այսպիսի մոտեցմամբ լրացման հոլովական արտահայտությունը, իհարկե, չի անտեսվել, այլ երկրորդ պլան է մղվել: Վերը նշված ենթախմբերից բացի Ասատրյանը առանձնացում է մի երրորդ խումբ ևս, որտեղ կապակցության լրացում հանդիսացող բաղադրիչը արտահայտված է հոլովական ձևով ու կապով (ինչպես՝ որոշում նախագծի մասին, պատերազմ թշնամու դեմ, միջոցառումների ընդդեմ գործազրկության, մայրու շահագործումը մայրու կողմից և այլն)¹²:

Վերը նշվածից դժվար չէ եզրակացնել, որ գոյական + գոյական տիպի և կապային կառուցվածքով բառակապակցությունների խնդրի լուծումը դժվարություններ է առաջացնում, լուծված չէ նաև գոյականական բառակապակցությունների միասնական սկզբունքով դասակարգումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյականական բառակապակցությունների դասակարգման հարցում գոյություն ունեցող տարակարծությունները, կարծիքների բազմազանությունը հնարավոր կլինի հաղթահարել, եթե առաջնորդվենք երկու հիմնական սկզբունքով. նախ՝ պետք է նկատի ունենալ գոյականական բառակապակցությունների լրացական բաղադրիչի խոսքիմասային պատկանելությունը, և երկրորդ՝ պետք է նկատի ունենալ, թե բառակապակցության մեջ լրացումը գերադա՞ս անդամին է վերաբերում, թե՞ մտածվում է որպես մի գեղջված միավորին վերաբերող լրացում:

Գոյականական բառակապակցությունները ըստ լրացման խոսքիմասային արտահայտության կարելի է բաժանել երեք խմբի:

1. Համասեռ բաղադրիչներով բառակապակցություններ: Այս խմբին դասվում են այն բառակապակցությունները, որոնց երկու բաղադրիչներն էլ արտահայտված են գոյականով: Լրացումը կարող է արտահայտված լինել ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով.

Շուկ դաշտերում էլ թերք չկա,-

Ամբարվել է պահեստներում...(96)¹³

...Դասագրքում կամ տետրի մեջ պետք է հիմն

Գտնի նա մի սիրո նամակ (62):

2. Տարասեռ բաղադրիչներով բառակապակցություններ: Այս խմբի բառակապակցություններում լրացումն արտահայտվում է ածականով, թվականով, դերանուններով, դերբայներով ու մակբայով: Օրինակ՝

¹¹ Տե՛ս նույն տեղը:

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ Բնագրային օրինակները բերված են՝ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1973:

Ողջ շրջանը արդեն գիտի
Եվ կոչում է քեզ «Կապույտ ձի» (41):
Ծիծաղեցին տարեց կանայք
...Մինչև Արտոն գտներ էլի
Ինչ-որ խոսքեր ծիծաղելի... (70)

3. Քազմասեռ բաղադրիչներով գոյականական բառակապակցություններ:
Այս խմբին դասվում են նրանք, որոնց լրացումն արտահայտվում է՝

ա. կապով և կապվող բառով՝ անկախ այն բանից՝ կապվող բառը գոյական է, թե այլ խոսքի մաս.

Գատում էր նա ...

Մի մասնավոր տանտիրոջ պես (26),

բ. նյութական իմաստ ունեցող տարբեր խոսքի մասերով.

...Գետնից կտրում, օդն են նետում

Կարմրատակած, խեղճ Արային... (58):

Այժմ անդրադառնանք բառակապակցությունների մեկ այլ սկզբունքով դասակարգմանը: Հայ քերականագետները վաղուց են քննարկում այն հարցը, թե գոյականական բառակապակցություններում կարող է որևէ միավոր զեղչված լինել:

Այդ կապակցությամբ Վ. Քոսյանը գրում է. «Կամ որոշ կապակցություններ էլ, որոնցում կապն ու կապի խնդիրը ստանձնել են գոյականի լրացման պաշտոնը՝ իրենց բուն լրացյալ դերբայի զեղչման հետևանքով: Այսպես, էլր ասում ենք վիշտ որդիների վերաբերմամբ, վճիռ մեկի (մի բանի) մասին և այլն, ապա սրանցում որդիների վերաբերմամբ, մեկի (մի բանի) մասին լրացումները եղել են ունեցած, առաջացած, հանած, տված և այլ դերբայների լրացում, որոնց զեղչումով էլ անցել են վիշտ, վճիռ գոյականներին (եղել են՝ որդիների վերաբերմամբ ունեցած վիշտ, մեկի (մի բանի) մասին հանած վճիռ, ապա ստացել են տրված ձևերը...)»¹⁴:

Գոյականական բառակապակցությունների զեղչման հարցը վերը նշված ձևով է ներկայացվել մինչև վերջերս: Այս հարցին նորովի են մոտենում Ս. Մելքոնյանը և Ս. Հայրապետյանը, գտնելով, որ «Գոյականական բառակապակցություններում զերադաս և ստորադաս անդամների կապակցման հարցում զեղչում - ոչ զեղչում հակադրությունն այնքան հատկանշական հանգամանք է, որ չի կարելի անտես առնել դրանց (այդ բառակապակցությունների) դասակարգման ժամանակ: Ըստ այդ հանգամանքի գոյականական բառակապակցությունները լինում են զեղչումով և առանց զեղչումի»¹⁵:

Այսպիսով, կարծում ենք, որ գոյականական բառակապակցությունների ենթախմբավորումը պետք է կատարել երկու սկզբունքով: Մի դեպքում պետք է նկատի ունենալ դրանց լրացական բաղադրիչի խոսքիմասային պատկանելությունը, մյուս դեպքում այն, թե լրացումը բառակապակցության մեջ առկա զերադաս բաղադրիչի¹⁶ն է պատկանում, թե¹⁷ ընկալվում է որպես մի զեղչված միավորին պատկանող լրացում: Ըստ լրացման խոսքիմասային արտահայտության՝ գոյականական բառակապակցությունները պետք է բաժանել երեք խմբի՝ 1. համասեռ բաղադրիչներով, 2. տարասեռ բաղադրիչներով, 3. բազմասեռ բաղադրիչներով բառակապակցություններ:

¹⁴ Վ. Քոսյան, նշվ., աշխ., էջ 154:

¹⁵ Ս. Մելքոնյան, Ս. Հայրապետյան, Չեղչված միավորներով գոյականական միավորներ, «Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու», Եր., 1993, էջ 98-109:

Л. Г. ОГАННЕСЯН — К вопросу систематизации субстантивных словосочетаний. — Систематизация субстантивных словосочетаний ведется по двум принципам: учитывая принадлежность дополняемого, учитывая тот факт, что дополнение — составная часть главного члена словосочетания или какого-то элитированного дополнения. С учетом принадлежности дополнения субстантивные словосочетания разделяются на три группы: 1. словосочетания с однородными членами, 2. словосочетания с разнородными членами, 3. словосочетания с многородными членами.